



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք. Բյուրեղավան
Վազգեն Ա. Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
Էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

14 մարտի 2024 թվական

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 04 ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 14 (տասնհինգ) անդամները:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Նիստին ներկա էին Բյուրեղավան համայնքի Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի վարչական ղեկավարներ Բորիկ Դավթյանը և Աղվան Հարությունյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Աշոտ Պողոսյանը:

Հակոբ Բալասյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու «Միասնություն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ Աննա Մկրտչյանի մանդատը տրվել է «Միասնություն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արգամ Արամի Շառլանին:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են 14-ը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 04 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 14-ի չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 04 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող 0.03984 և 0.05143 հեկտար մակերեսներով հողամասերը համայնքի սեփականություն ճանաչելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 23-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 7 Դեմ - 7 Ձեռնպահ - 0

Որոշումը չընդունվեց:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ԱՎԱԳ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱՂԻՅԱՆ

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ԲԱԼԱՍՅԱՆ